**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ԲՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԱՍՆԱԿԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/23» ծածկագրով ԲՄ ընթացակարգի արդյունքում 2018թ-ի հունիսի 18-ին կնքված N ԲՄԱՊՁԲ-7/23-3 ծածկագրով գնման պայմանագրի N 1 համաձայնագիրը 2018թ. հոկտեմբերի 27-ին մասնակի լուծելու մասին համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

***Փոփոխության պատճառ:*** Հիմք ընդունելով Պայմանագրի 8.9 կետը, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին N 1 համաձայնագիրը լուծել մասնակի՝ 80 000 կգ օշարակի մասով (20 000 կգ հոկտեմբեր ամսին, 20 000 կգ նոյեմբեր ամսին, 40 000 կգ դեկտեմբեր ամսին):

***Փոփոխության նկարագրություն*** Հիմք ընդունելով Պայմանագրի 8.9 կետը, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին N 1 համաձայնագիրը լուծել մասնակի՝ 80 000 կգ օշարակի մասով (20 000 կգ հոկտեմբեր ամսին, 20 000 կգ նոյեմբեր ամսին, 40 000 կգ դեկտեմբեր ամսին):

Համաձայնագրի 1.1 կետով նախատեսված լուծման արդյունքում N 1 համաձայնագրի գինը նվազում է 31 821 600 (երեսունմեկ միլիոն ութ հարյուր քսանմեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամով և կազմում է 87 048 782.34 (ութսունյոթ միլիոն քառասունութ հազար յոթ հարյուր ութսուներկու ամբողջ երեսունչորս) ՀՀ դրամ:

***Փոփոխության հիմնավորում:*** Չի հակասում ՀՀ կառավարության 04.05.2017թ. № 526-Ն որոշմանը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ա.Գրիգորյանին:

Հեռախոս՝ *010-29-44-18*:

Էլ. փոստ՝ a.*grigoryan. mil.am:*

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

**N ԲՄԱՊՁԲ-7/23-3 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ N 1 ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՄԱՍՆԱԿԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան 27 -ը հոկտեմբերի 2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և անհատ ձեռնարկատեր Աբգար Ավետիսյանը, այսուհետև Վաճառող, մյուս կողմից՝ հիմք ընդունելով 26.04.2018թ. կնքված N ԲՄԱՊՁԲ-7/23-3 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.9 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1.Համաձայնագրի առարկան**

1.1 Հիմք ընդունելով Պայմանագրի 8.9 կետը, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին N 1 համաձայնագիրը լուծել մասնակի՝ 80 000 կգ օշարակի մասով (20 000 կգ հոկտեմբեր ամսին, 20 000 կգ նոյեմբեր ամսին, 40 000 կգ դեկտեմբեր ամսին):

1.2 Սույն Համաձայնագրի 1.1 կետով նախատեսված լուծման արդյունքում N 1 համաձայնագրի գինը նվազում է 31 821 600 (երեսունմեկ միլիոն ութ հարյուր քսանմեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամով և կազմում է 87 048 782.34 (ութսունյոթ միլիոն քառասունութ հազար յոթ հարյուր ութսուներկու ամբողջ երեսունչորս) ՀՀ դրամ:

**2.Այլ պայմաններ**

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման /կնքման/ պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ապրանքի հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ք. Երևան, Բագրևանդի 5<br>ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011144079<br>ՀՎՀՀ 02522157<br>ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | Ա/Ձ Աբգար Ավետիսյան<br>ՀՀ Վայոց Ձորի մարզ, գ. Արփի, 1փ. 3փկղ, 2<br>«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 1150021136416450<br>ՀՎՀՀ 85772452 |
| Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ | Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ |